

Ըլան էկին, կանչըն ձէնով Յեօլան, ըսըն:

— Դաւիթ զըւր ի, կանչը գեայ:

Էսայ. — Վըէ՞ կանչիմ Դաւիթ:

Ըսըն. — Մահեար Դաւիթ մի աղէնիբու. զիւշման էր, էս-
քամ տղայ սպանից:

70. Յեօլան էն տե կը վախենայ, կերթայ Դաւթը մօտ. —
Աստուած քեօ ասուն աւըրի, Դաւիթ, Աստուած քեօ ասուն
աւըրի, Դաւիթ, զիւ էդ աղէնիբ զըէ՞ սպանիբ:

Էսայ. — Ձայնամ, ըծը չլտան, խօյ չըմ զարկիբ ի:

Էսայ. — Քեաղքը մարդիբ էկած, զիւս. ըսնած ի. էլի՛,
ճուսայ տու:

71. Դաւիթ կըլնը, կգեայ զիւս, կը տննայ էսքամ մարդ
լցուած ի դաս զերայ: Շատիբ կան Դաւիթ չի տեսած. էնունը
էլ էկած ին զԴաւիթ տննան, թամաշա էնին. շատիբ կան սր
Դաւիթըն զարկիլիւ յապեօվ էկած ի:

72. Որ Դաւիթ կըլնը զիւս, էսքան մարդ՝ սր Դաւիթ կը
տննան, յախու կը դեօղան, յերարիւ գեօղաուկ կը զրուցըն. —
Դաւիթըն ձեռ մի՛ք աէք, սր աշախի՛ մի էլ կօպանի:

Կը դառնան, յըմեն մէկ յիւր տուն կերթայ:

73. Էն մէկէլ օր կը կանչին Յեօլանըն, կըսըն.

— Յեօլան. զիւ զըսի՞ս, զըէ միք զքի կանչիբ ինք. մինք
յերեկ էկինք, ախանք Դաւիթ, վախեցանք. Դաւիթըն մէկ սա-
նիլաթը² զիւ, էզո՞ սր սանիլաթը չգնի՛ս, քեաղքը մէջ շատ
աւերութիւն աէլնի:

74. Յեօլան կըսը. — Խօ ինչ էնիմ. սր զիւ կուզիք, էնինք
գեառնարած: Էնունք էլ կըսըն.

— Էնինք գեառնարած, չմնայ քեաղաք:

Յեօլան կգեայ տուն, կըսը. — Դաւիթ, ըս տարը մի խայ
պակաս ի, կը գեան, ըլնըս գեառնարած. մէ քեանի սօմար խայ
կառնինք, սր ձմեռ անութթը չի մնանք:

Դաւիթ կըսը. — Ուր իմ հախ էսա գլխէն տան, ըծը չի
խափին, գեառնիբ կը տանիմ:

75. Յեօլան ի, կըլնը կերթայ քեաղքը մարդիբու մօտ, կըսը:
Էզա մարդիբ կըսըն. — Յեօլան, միք էսա գլխէն էնու հախ
թամամ կտանք, թօ չմնայ քեաղքընիբ:

Կըսը. — Խըլիւսիւն ձիւ գեառնիբ ըրիէք գարկեսախի³ զիւս.
զԴաւիթ կը ճամբիսիմ, թը յըմեն ժողովաի տանը չիւր յեօլա-
րըն, յըմեն մարդ կը գէք, ձի գեառնիբ ջուկէք, կը տանիք:

1 Ձարթնիլ: 2 Թրք. — արհեստ: 3 Թուրք. — Կարախ. գար-
պաս. մեծ դուռ: